



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԻԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N. Y.

Թիւ 11062  
Փետրուար 12, 1964

Արժանաշնորհ  
Տ. Կիրեղ Քհնյ. Գալճայեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Եւ Նախագահ Գաղտնաբժան Միական Խորհուրդի  
Ս. Միլվոքի,

Սիրելի Տէր Կիրեղ,

Առայժմ ենք 1964 Փետրուար 10 թուակէր Ձեր տեղեկագիրը, որով  
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Պեկտեմբեր 21ին գումարուած  
Տարեկան Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրու-  
թիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արգելները, կը խնդրէք ընտրուած  
անձներուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանո-  
նադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է  
ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ անգամ Միական  
Խորհուրդի:

- Տիարք՝ Բարսեղ Վարատեան
- Տովհաննէս Սարեան
- Ղազար Պոյսեան
- Աւետիս Հայալեան
- Խաչիկ Գարեան
- Ճօրն Գաբրիէլեան

Կը յանձնարարենք որ Ձեր Միական Խորհուրդի նոր զիւանի անուն-  
հասցէները Առաջնորդարան ղրկէք փութով:

Այսու օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի  
Եւ Ձեր պաշտօնակիցներուն արդիւնաւոր զործունէութեան տարի մը, ի  
փառքամբութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Եւ Գանատայի